ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» փետրվարի 2021թ. N ՄՈ/ 41-2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի պահանջները և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի փետրվարի 3-ի N 08 և «Լեռնամերձի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակորպության տնօրենի 2021 թվականի փետրվարի 4-ի գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 27 հավելվածի 1-ին կետում «Գևորգյան Գևորգ» բառերը փոխարինել «Մուրադյան Գևորգ» բառերով.
   2) որոշմամբ հաստատված N 28 հավելվածի 7-րդ կետում վերահաստատվել «Յարալյան Աննա» բառերը.
   3) որոշմամբ հաստատված N 76 հավելվածի 7-րդ կետում վերահաստատել «Սեդրակյան Տաթևիկ» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 05.02.2021 16:59:46 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230